ՀՏԴ : 929:891.981.09Դևրիկյան

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Պատմական գիտությունների դոկտոր (2008), պրոֆեսոր (2015), Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն (2018), տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (2023 թ. մարտից) Կարեն Արտաշեսի Մաթևոսյանը 65 տարեկան է:

Ծնվել է 1958 թ. մարտի 7-ին Երևանում, մտավորականի ընտանիքում: Հայրը՝ պատմաբան, աղբյուրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922–2004), պատմական գիտությունների թեկնածու, Մատենադարանի երկարամյա գիտաշխատող և գլխավոր ավանդապահ է եղել, մայրը՝ Սեդա Մարաբյանը (1933–2011), ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակից էր:

Կ. Մաթևոսյանը միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 125 դպրոցում, ապա 1975–1979 թթ. ուսանել և ավարտել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի պատմահասարակագիտական բաժինը: 1989 թ. ԳԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անի քաղաքի գրչության կենտրոնը», իսկ 2008 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական քննություն» թեմայով:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Բյուրականի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ (1979–1982), 1980–2004 թթ. աշխատել է Հայաստանի ազգային պատկերասրահում որպես գիտաշխատող, 1987–1995 թթ.՝ հայ հին և միջնադարյան արվեստի բաժնի վարիչ, 1995-ից՝ գիտքարտուղար: 2007–2008 թթ. եղել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մշակույթի բաժնի տնօրեն: 2005 թվականից աշխատել է Մատենադարանում, նախ՝ որպես գիտաշխատող, ապա՝ 2009-ից՝ արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ:

Կ. Մաթևոսյանը զբաղվել է մանկավարժական-դասախոսական աշխատանքով՝ 1985–1991, 1994–2001, 2011–2014 թթ. դասախոսել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ դասավանդելով «Հայ ժողովրդի պատմություն» և «Հայ եկեղեցական արվեստ» առարկաները: 2009–2022 թթ. դասավանդել է Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ «Հայ ճարտարապետության պատմություն», «Հայերեն ձեռագիր գիրքը», «Ուշ միջնադարյան հայկական մանրանկարչությունը»

---

* Ներկայացվել է 24. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

առարկաները: 2016–2018 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է «Կիլիկիայի հայկական պետությունը և մերձավորարևելյան տարածաշրջանը» առարկան: Գիտամանկավարժական գործունեության համար 2015 թ. Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում արժանացել է պրոֆեսորի կոչման:

Գիտական և մանկավարժական գործունեությանը զուգընթաց Կ. Մաթևոսյանը զբաղվել է խմբագրական աշխատանքով: 1994–1996 թթ. եղել է «Լուսաւորիչ» թերթի գլխավոր խմբագիր, 1997–2000 թթ.՝ Սբ. Էջմիածնի «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի գլխավոր խմբագիր, 2001 թ.՝ «Գիտելիք» ուսումնական ամսագրի գլխավոր խմբագիր, և վերջապես 2002–2008 թթ.՝ իր իսկ հիմնադրած «Հայ արվեստ» եռամսյա մշակութային հանդեսի գլխավոր խմբագիր:

Դեռևս 1990-ականներից Կ. Մաթևոսյանն զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ. 1991–2000 թթ. եղել է արվեստագետների միավորող «Մոմիկ» մշակութային միություն ՀԿ-ի փոխնախագահ, 2000–2007 թթ.՝ նախագահ: Կազմակերպել է հայ արվեստագետների ցուցահանդեսներ Հայաստանում և արտասահմանում՝ Լիբանան, Կանադա, ԱՄՆ, Սիրիա, Դանիա, Ավստրալիա: Ցուցահանդեսների, գիտաժողովների և այլ գիտամշակութային միջոցառումների մասնակցելու նպատակով եղել է մի շարք երկրներում (Վրաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Շվեյցարիա, Իտալիա, Չեխիա, Իրան, Թուրքիա): 2012–2014 թթ. երեք գիտարշավի է մասնակցել Արևմտյան Հայաստանում:

Կ. Մաթևոսյանը 2012-ից եղել է ԲՈՀ-ի (այժմ՝ ԲՈԿ)՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող «Հայոց պատմության» մասնագիտական խորհուրդի անդամ, իսկ 2017-ից մինչև այժմ հանդիսանում է «Պատմագրություն և աղբյուրագիտություն» մասնագիտական խորհուրդի անդամ, միաժամանակ Հայաստանի պատմության թանգարանի և Մատենադարանի գիտական խորհուրդների, Հայաստանի ազգային գրադարանի կառավարման խորհրդի անդամ է: Նրա գործունեությունը գնահատվել է Հայ Առաքելական եկեղեցու «Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ» շքանշանով՝ «հայագիտական վաստակի և մանկավարժական բեղուն գործունեության համար» (2019 թ.) և ՀՀ ԿԳՄՍՆ ոսկե մեդալով՝ «Թանգարանային ոլորտում ունեցած նշանակալի ավանդի և մշակույթի բնագավառում երկարամյա գործունեության համար» (2021 թ.):

Կ. Մաթևոսյանը հեղինակ է միջնադարյան Հայաստանի պատմությանը, մատենագրությանը, ճարտարապետական, որմնանկարչական և մանրանկարչական արվեստին, ձեռագրական մշակույթին նվիրված շուրջ երկու տասնյակ գրքերի և 100-ից ավելի գիտական հոդվածի, որոնց ամբողջական ցանկը կարելի է տեսնել համացանցում՝ Վիքիպեդիա ազատ հանրագիտարանի՝ նրան նվիրված հոդվածում:

Կրթությամբ լինելով պատմաբան՝ իր գիտական և մշակութային-հասարակական գործունեությունը Կ. Մաթևոսյանը սկսեց մանրանկարչությանը, գրչության արվեստին և որմնանկարչությանը նվիրված աշխատություններով, որին նպաստեցին թեկնածուական ատենախոսությունը և 24 տարի Հայաստանի ազգային պատկերասրահում աշխատելը:

Առաջին իսկ գործում ի հայտ եկավ գիտահետազոտական արդյունքները հանրայնացնելու նրա մղումը, որը բացատրվում է նաև 1990-ական թվականների ընդհանուր իրավիճակով, երբ հայ միջնադարյան հոգևոր արվեստը և պատկերագրությունը մեծապես անծանոթ էին ո՛չ միայն հասարակական լայն խավերին, այլև արվեստասեր հասարակայնությանը: Հայ միջնադարյան եկեղեցական արվեստը հարկավոր էր դուրս բերել լայն ուղեծիր, վերջինիս պատկերները ընկալելի դարձնել: Այս նպատակին են ուղղված Կ. Մաթևոսյանի առաջին աշխատանքները:

Առաջին նման աշխատանքն էր «Որմանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում» (Երևան, 1990) գիրք-ուղեցույցը, որում ներկայացվում են Ազգային պատկերասրահում պահվող հայկական 16 որմնանկարների պատճենները, և դրանք վերլուծվում են հայ ու ընդհանուր քրիստոնեական որմնանկարչության շրջագծում: Այս նույն նպատակին էր ծառայում Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանի համահեղինակությամբ 1992 թ. լույս տեսած ուղեցույցը, որի «Հայ հին և միջնադարյան կերպարվեստը» բաժինը գրել էր Կ. Մաթևոսյանը:

Կ. Մաթևոսյանը, որպես գիտական խորհրդատու, մասնակցել է Թբիլիսիի Սբ. Գևորգ հայկական եկեղեցու որմնանկարների վերականգնմանը: Այս եկեղեցուն է նվիրված 2015 թ. Թբիլիսիում նրա առաջաբանով անգլերեն, հայերեն, վրացերեն և ռուսերեն տպագրված «Սուրբ Գևորգ տաճարը. Որմնանկարները» գիրքը:

Քրիստոսի կյանքի գլխավոր դրվագները՝ Ավետումից մինչև Հոգեգալուստ, ներկայացնող 12 պատկերներին է նվիրված նրա «Տերունական պատկերներ» (Երևան, 1993) գիրքը՝ հեղինակակցությամբ Ավետ Ավետիսյանի: Տերունական պատկերներից յուրաքանչյուրը ներկայացվում է հետևյալ կառուցվածքով: Տվյալ թեմայով բնորոշ մի պատկեր, պատկերի անվանման վկայակոչումը, ուր ներկայացված է այդ թեման, վերջինիս պարունակած հոգևոր խորհուրդը, տվյալ պատկերին մաս կազմող դրվագների խորհրդաբանական նշանակությունը և յուրաքանչյուրի սկզբնաղբյուրն ըստ միջնադարյան մատենագրության: Այնուհետև այդ պատկերին բնորոշ մի շարք օրինակներ են բերվում հայ և համաշխարհային արվեստից: Յուրաքանչյուր պատկերին նվիրված բաժինը սկսվում է նույն թեմայով շարականով, որը ցույց է տալիս գրական և արվեստի ստեղծագործությունների ներքին միասնությունն ու ընդհանրությունները:

Այս գրքի շնորհիվ ընթերցողը պատկերացում է կազմում միջնադարյան արվեստի կանոնի մասին: Գիրքը լիովին ծառայեց իր նպատակին՝ հաղորդակցություն հաստատելու անցյալի եկեղեցական արվեստի ավանդների հետ:

Այս նույն շրջագծում է ստուգաբանվում «Հայաստան. ուղեցույց ուխտավորների և զբոսաշրջիկների համար» (1998) գրքում Կ. Մաթևոսյանի Հայ եկեղեցու պատմությանը նվիրված բաժինը:

Արվեստի բնագավառում գիտահանրամատչելի հաջորդ երկու գործերն արդեն տեղայնացել են նրա մյուս գիտական նախընտրությունների շրջանակում: Նորավանքին վերաբերող հետաքրքրությունների շրջագծում է գրված ճարտարապետ, մանրանկարիչ Մոմիկին նվիրված գիրք-ալբոմը (Երևան, 2010), ուր Մոմիկի ստեղծագործությունները ներկայացվում են Այունիքում՝

Օրբելյանների գործունեության շրջանակում: Հակիրճ և ընդհանրացված շարադրանքով թվարկվում են Մոմիկի ընդօրինակած և նկարազարդած ձեռագրերը, բերվում են մի շարք պատկերներ ու կատարվում է դրանց արվեստագիտական վերլուծությունը:

Նույն կառուցվածքն ունի «Հաղբատի Ավետարանը» դարձյալ գիրքալբոմը (Երևան, 2012): Այս գիրքը ընորոշ օրինակ է, թե ինչպես կարելի է ներկայացնել և վերլուծել առանձին մեկ Ավետարանը: Կ. Մաթևոսյանի առանձնահատուկ ուշադրությունն այս ձեռագրի հանդեպ բացատրվում է վերջինիս՝ Անիի ձեռագրային միջավայրին պատկանելով, որովհետև գրվել ու նկարազարդվել է Հոռոմոսում, իսկ անվանումը ստացել է Հաղբատում գրված լինելու շնորհիվ:

Մատենադարանի հայկական ձեռագրերի մանրանկարներին է նվիրված Է. Վարդանյանի հետ կազմված «Հայկական մանրանկարչություն» ֆրանսերենով հրատարակված ծավալուն ալբոմը (Երևան, 2018):

Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում Բագրատունյաց մայրաքաղաք Անին է, որտեղ նա յուրաքանչյուր քայլը կատարում է զգույշ, բայց՝ հաստատուն՝ առաջնորդվելով միջգիտակարգային համադրական քննությամբ՝ պատմագիտության, հայ մատենագրության, հնագիտական նյութերի, հայ արվեստի, հայկական ձեռագրերի հիշատակարանների և հայ վիմագրական արձանագրությունների տվյալների միահյուսված քննությամբ: Դեպի Անի տանող երկու գլխավոր ճանապարհներն են հայ գրչության վանական մի քանի կենտրոնները և միջնադարյան ժամանակագրությունը: Պատահական չէ, որ նրա թեկնածուական ատենախոսությունը նվիրված էր Անիի գրչության կենտրոնին, իսկ առաջին գիրքը միջնադարյան հայտնի աշխարհիկ և վանական կենտրոններից Արուճին, որը նաև իր հայրական ծննդավայրն է, որի հանդեպ սերը ընտանեկան ավանդներ ունի:

«Արուճ» (Երևան, 1987) ուսումնասիրության մեջ պատմաքննական անդրադարձ է կատարվում այս բնակավայրի անցյալին և միջնադարյան ճարտարապետական հուշարձաններին, վերջիններիս վիմական արձանագրություններին և հայ մատենագրության մեջ եղած հիշատակություններին: Մեծ տեղ է հատկացված աշխարհիկ շինություններին, որովհետև Գրիգոր Մամիկոնյան իշխանի 661–685 թթ. կառավարման շրջանում Արուճը եղել է Հայաստանի վարչական կենտրոնը:

Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների շրջագծում կարևոր տեղ է գրավում Նորավանքը՝ որպես միջնադարյան հայտնի գիտական և ձեռագրային կենտրոն, ուր ստեղծագործել է նաև Մոմիկը: Պատմաբանն իր գործուն մասնակցությունն է բերել Նորավանքի նորոգման հետ կապված աշխատանքներին, ապա՝ նորոգման տասնամյակին նվիրված հանդիսություններին՝ կազմելով «Նորավանք» (Երևան, 2009) ժողովածուն, որում վանքի պատմությանը նվիրված բաժնի հեղինակն է:

Այս վանքին է նաև նվիրված «Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները» (Երևան, 2017) արժեքավոր ուսումնասիրությունը, որը կրկնակիորեն է կարևորվում: Նախ, որովհետև այստեղ մեկտեղվել են նախկինում Սեդրակ Բարխուդարյանի, Սուրեն Սաղումյանի և Մայքլ Սթոունի հրատարակած Նորավանքին վիմական արձանագրությունները, դրանց հավելել է վերջին

շրջանում շինարարական աշխատանքների, պեղումների և իր իսկ որոնումների արդյունքում ի հայտ եկած ևս երկու տասնյակ վիմական արձանագրություն, ինչպես նաև՝ նորովի վերընթերցել ու տարբեր տողատումներ և բառաճշտումներ կատարել մինչ այդ հայտնի վիմական արձանագրություններում, միաժամանակ դրանք բոլորն օժտելով համապատասխան ծանոթագրություններով՝ երկրորդ կյանք է հաղորդել պահպանված և հայտնի վիմագրերին: Երկրորդ՝ վիմագրերին զուգահեռ բերել է Նորավանքին վերաբերող հայտնի հիշատակարանները՝ իրար հետ զուգադրելով վիմական և ձեռագրային հիշատակությունները և ցույց տալով, թե դրանք ինչպես են փոխլրացնում իրար:

Արուճին և Նորավանքին վերաբերող ուսումնասիրություններում մշակված եղանակով է գրված «Հավուց Թառի վանքը» (Երևան, 2012) աշխատությունը, որում դարձյալ մատենագրական հարուստ նյութի հիման վրա բերվում է այս վանքի հիմնումը, անվան ստուգաբանությունը, ավանդությունները, ապա և՝ բուն պատմությունը վանական համալիրին մաս կազմող միավորներով: Հեղինակը փորձել է վերականգնել նաև վանքի առաջնորդների ցուցակը կամ Գավազանագիրքը: Այս գործն առանձնահատուկ կարևորություն ունի ոչ միայն Հավուց Թառի միջնադարում խաղացած դերով, այլև պայմանավորված հանգամանքով՝ այն եղել է նաև Երևանի թեմական կենտրոնը, որի առաջնորդի նստավայրն այստեղ է գտնվել: Ուստի Հավուց Թառի պատմությունն ուղղակիորեն հարաբերվում է Երևանի պատմության հետ:

«Աղթամար» (Երևան, 2013) գիրքը կարելի է անվանել Աղթամարին նվիրված հանրագիտարան, ուր հանգամանալից տեղեկություններ կան այս, ինչպես նաև՝ Վանա ծովի մյուս կղզիների, համալիրի աշխարհիկ ու եկեղեցական շինությունների, տաճարի պատկերանշանների խորհրդաբանության, կղզում գրված ձեռագրերի և Աղթամարի կաթողիկոսության մասին: Համակարգմամբ ի մի է բերվում առկա ողջ գիտական գրականությունը և ամբողջական պատկերացում տրվում ողջ կղզու և այնտեղ գտնվող կառույցների մասին:

Գիտական հիմքի և աղբյուրագիտական քննության վրա խարսխված հանրամատչելի տեղեկատվական աշխատանք է «Մուղնու Ս. Գևորգ» գրքույկը (Երևան, 2000): Իր ընդգրկունության և գիտահանրամատչելի ոճով շարադրված լինելու համար այն թարգմանվել է նաև ռուսերեն ու անգլերեն (Երևան, 2009):

Կեչառիսի վանական համալիրի հիմնման հազարամյակին նվիրված «Կեչառիս 1000» ժողովածուի մեջ (համահեղինակներ՝ Մուրադ Հասրաթյան, Վարդան Դևրիկյան) (Սբ. Էջմիածին, 2004) Կ. Մաթևոսյանը գրել է վանքի պատմությունը և այստեղ Պահլավունիների գործունեությանը նվիրված բաժինը:

Կ. Մաթևոսյանը պատկանում է հայագիտության և, ի մասնավորի, պատմագիտության բնագավառում Ղևոնդ Ալիշանին ու Գարեգին կաթողիկոս Հովսեփյանին հետևող այն գիտնականների թվին, ովքեր կատարում են պատմության երևույթների և իրար փոխկապակցված փաստերի առավել խորքային քննություն՝ ընդհուպ մինչև պատմագրական ավելի փոքր միավորների՝ վիմական արձանագրությունների, ձեռագրերի հիշատակարանների ու Մանր ժամանակագրությունների հաղորդած տեղեկությունների կիրառմամբ:

Հայկական ժամանակագրություններից Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագրությունը, որը հասնում է մինչև 1163 թ., ապա շարունակվում և հետագա հավելողների կողմից ձգվում մինչև XVIII դար, թե՛ ամենածավալունն է հայկական ժամանակագրությունների շարքում և թե՛ բոլորից խոր տեղեկություններ է պարունակում անիական միջավայրի մասին, որը երևում է նաև հեղինակի Անեցի անվանումից: Հանգամանքը կարևոր դեր է խաղացել, որ Կ. Մաթևոսյանը հանգամանորեն զբաղվի այս երկով՝ ուսումնասիրելով վերջինիս ձեռագրերի խմբագրությունները՝ առկա հավելումներով և տարընթերցումներով: Կատարված հսկայական աշխատանքի նախապատրաստությունն է «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները» (Երևան, 2009) ուսումնասիրությունը: Այս գործի տրամաբանական շարունակությունը դարձավ ժամանակագրության գիտաքննական բնագրի հրատարակությունը («Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն», աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014): Ժամանակագրությունների քննական բնագրերի կազմումը կրկնակիորեն է դժվար: Բացի բոլոր բնագրերին բնորոշ տարընթերցվածներից, Ժամանակագրություններն ունեն մի շարք յուրահատկություններ: Դրանց խմբագիր-գրիչները ընդօրինակությունների ժամանակ բնագրերի մեջ կատարել են երկու բնույթի հավելումներ: Առաջին՝ հավելումներ են կատարվել տարեթվերի ներքո բերված շարադրանքում՝ այն ընդլայնելով կամ կրճատելով: Երկրորդ՝ նոր փաստեր կամ իրադարձություններ են հիշատակվել որևէ տարեթվի ներքո: Երրորդ կարգի փոփոխությունները, որոնք վերաբերում են ժամանակագրությունների շարունակմանը որևէ ժամանակագրության ավարտի տարեթվից հետո, բնականաբար, պարզ են: Ավածը վերաբերում է նաև Անեցու Ժամանակագրությանը, որն ավարտվում է 1163 թվով, որից հետո հիշվող տարեթվերը, հասկանալի է, որ հետագա հավելողների կողմից են ավելացվել: Առավել բարդ է բուն ժամանակագրության կազմումը՝ անջատելով հետագա շրջանի հեղինակների բուն ժամանակագրության մեջ կատարած հավելումները, որոնք մանրակրկիտ քննությամբ վեր է հանել Կ. Մաթևոսյանը՝ դրանք ընդհանուր բնագրի մեջ բերելով այլ շարվածքով և յուրաքանչյուր հավելման կողքին նշելով, թե այն որ ձեռագրում է հանդիպում: Նման հանգամանալից աշխատանքի շնորհիվ ընթերցողը միանգամից տեսնում է հետագա հավելումների շերտը և թե դրանցից յուրաքանչյուրը որ ձեռագրում է կատարվել:

Նույն սկզբունքով է կազմված նաև Կիլիկյան Հայաստանի XIII դարի հեղինակ Հեթում Պատմիչի կամ Կոռիկոսցու Ժամանակագրությունը, որը Կ. Մաթևոսյանը դիտարկում է նրա գործունեության ու գրական ժառանգության համապատկերում՝ «Հեթում պատմիչ Կոռիոսցին և նրա ժամանակագրությունը» գրքում (Երևան, 2011):

Ինչպես վերն ասացինք, Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում Բագրատունյաց արքայանիստ և Հայոց քաղաքամայր Անին է, որի հետ են հարաբերվում և, ասես, մի ճյուղը լինեն հայ վանական տարբեր կենտրոններին ու առանձին տոհմերին և անհատներին նվիրված ուսումնասիրությունները:

Անիական շարքն սկսվեց թեկնածուական ատենախոսության ընդլայնված տարբերակը եղող «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» (Սբ. Էջմիածին, 1997) մենագրությամբ: Ինչպես վերնագիրն է հուշում, գիրքն ունի երկմաս կառուցվածք: Առաջին մասը նվիրված է հոգևոր-եկեղեցական կյանքին: Ներկայացվում են Անիի կաթողիկոսական կենտրոնը, թեմական ընդգրկումը, վանքերն ու եկեղեցիները և քաղաքում հիշատակվող կրոնական տարբեր հարանվանությունները: Նման աշխատանքը միանգամայն նորություն էր, քանի որ անիագիտությունը առավել զարգացել էր նյութական մշակույթի և պեղումների արդյունքում գտնված նյութերի հիման վրա: Նշենք՝ նաև խորհրդային շրջանում եկեղեցուն վերաբերվող հարցերի ուսումնասիրությունը չէր խրախուսվում: Շնորհիվ այս գրքի՝ ընդգրկուն պատկերացում է կազմվում Անիի եկեղեցական կյանքի և կառույցի մասին, որն իր հերթին օգնում է ավելի ճիշտ ըմբռնելու Անիի համար ասվող՝ «Հազար ու մի եկեղեցիների քաղաք» արտահայտությունը:

Գրքի երկրորդ մասը նվիրված է Անիի ձեռագրային գրչագրական ժառանգությանը: Ձեռագրային նյութը ըստ գրչության վայրերի այնպես է ցույց տրվում, որ երևում է, թե որ վանքերն են եղել առավել նշանակալից գրչության կենտրոններ և թե ձեռագրերի գրության թիվն ինչպես է ուղիղ համեմատական եղել քաղաքի վանքերին, աղքատացմանն ու անկմանը, որը մեկ անգամ ևս գալիս է վկայելու՝ հայկական ձեռագրերի գրության ընթացքն ուղիղ համեմատական է եղել ժողովրդի անցած պատմական ուղուն:

«Անի-Շիրակի պատմության էջեր» (Երևան, 2010) գրքում տեղ են գտել Անիի պատմությանը և Բագրատունյաց թագավորության կազմում եղած մի շարք վանքերին ու բնակավայրերին և Անիի հետ կապված տարբեր գործիչներին նվիրված հոդվածները: Հեղինակի ելակետը միայն այդ բնակավայրերի աշխարհագրական մերձավորությունը և վարչաքաղաքական կապվածությունը չի եղել Անիի հետ, այլ որ դրանք սերտորեն հարաբերվել ու իրենց մեջ պահել են Անիի պատմության շատ էջեր: Կ. Մաթևոսյանը բերում է Հոռոմոսի և Բագայրի վանքերի օրինակը, որոնց վիմական արձանագրություններում Անիի փողոցների և քաղաքամասերի անուններն ավելի շատ են պահպանվել, քան բուն քաղաքի արձանագրություններում: Գրքում այն դրույթն է ընդգծվում, որ Անիի գրային և մշակութային կապերը շատ ավելի հեռուն են գնում և, ըստ այդմ, անիագիտական ուսումնասիրությունները տարածական ու խորքային առումով ավելի լայն ընդգրկում պետք է ունենան:

Որոշակիորեն հետադարձ հայացքով է գրված և նախորդ աշխատանքների հանրագումարն է «Պատմագիտական դիտարկումներ. Արուճ, Հավուց Թառ, Անի, Աղթամար, Վայոց Ձոր» (Երևան, 2020) գիրքը: Ինչպես առաջաբանում նշում է, հեղինակն այս գիրքը գրել է համավարակի օրերին և ընթերցողին բերում է իր կատարած աշխատանքները, նաև շեշտադրում, թե պատմամշակութային այդ տեղավայրերի հետ կապված ինչ խնդիրներ կան և դրանք ինչպես պետք է լուծել:

Ռաֆֆին «Սամվել» վեպի առաջաբանում գրում է՝ մեր պատմագրության մեջ անտեսված է եղել ժողովուրդը և հիշատակություններ չկան: Կ. Մաթևոսյանն Անիի օրինակով պեղել և հանել է ոչ միայն իշխանական ու ազնվականական տոհմերի, այլև ժողովրդի տարբեր խավերի, արհեստավորների և

անգամ ընտանեկան գերդաստանների մասին եղած հիշատակությունները: Այս հարցին են նվիրված նրա երկու գրքերը՝ «Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս» (Երևան, 2015) և «Անին և անեցիները» (Երևան, 2021):

Առաջին գրքում հեղինակն անդրադառնում է Պահլավունիների տոհմին և Գրիգոր Մագիստրոս անունը կրող անձնավորությունների հետ կապված շփոթին, երբ մեկի գործերը վերագրվել են մյուսին կամ հակառակը: Նաև ներկայացնում ու նշանավորում է Պահլավունյաց տոհմի պատմությունը և դերակատարությունը X–XIII դարերում: Գրքի առաջաբանում հեղինակը կարևորում է նաև հայ ազնվականության պատմության ուսումնասիրությունը:

Եթե նախորդ աշխատություններում Կ. Մաթևոսյանն Անին ներկայացնում էր ըստ աշխարհագրական ընդգրկման ու պատմամշակութային շերտերի, ապա «Անին և անեցիները» գրքում արդեն քաղաքի բնակչությունն է ըստ հասարակության շերտերի՝ թագավորական ընտանիք, ազնվականներ և իշխաններ, հոգևոր դասը, իր բազմաստիճանությամբ ու ամենաբազմազան ժողովրդական մասը՝ Անիի գերդաստան-տոհմերը, ընտանիքները, արհեստավորներն ու առևտրականները: Քննվող նյութի վերհանման նույն սկզբունքով ներկայացվում են նաև Անիի քաղաքամասերն ու փողոցները: Հեղինակը Ռաֆֆուն համահունչ նշում է, որ պատմագրական տվյալները հնարավորություն չեն տալիս գրել ժողովրդի մասին, սակայն գրական ավելի փոքր ժանրերը՝ վիմական արձանագրությունները, հիշատակարանները, Մանր ժամանակագրությունների հիշատակություններն արդեն ուրվագծում են ժողովրդական կյանքի խճանկարը: Այսօր պատմագիտության կարևոր ուղղություններից է առևտրականության պատմությունը, և Անիի տոհմերին, գերդաստաններին, արհեստավորների դասերին ու վաճառականներին նվիրված բաժիններով՝ Կ. Մաթևոսյանի ջանքերով գրվում է նաև Անիի նմանօրինակ պատմությունը, որը առաջին նման աշխատանքն է՝ նվիրված միջնադարյան Հայաստանում առևտրականության պատմությանը:

Կարեն Մաթևոսյանին սրտանց շնորհավորում եմ ծննդյան 65-ամյակի առիթով՝ մաղթելով գիտական և աշխատանքային նորանոր հաջողություններ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր